Արձանագրություն N 3

ՋԿ-ԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

2 մայիսի 2019թ.

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ Վ. Օհանջանյանը (ԳԱ), Հ. Սիրունյանը (ԳԱ), Ա. Քամալյանը (ԲԱ) և Լ. Ստեփանյանը (ԲԱ):

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայանելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 26.04.2019թ.-ին:

02.05.2019թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակցների կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ վառելիքի (բենզին-ռեգուլյար) ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից համարել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ–ին.

Սահմանված կարգով հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ սահմանված կարգով պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

անդամներ		Վ. Օհանջանյան
		Հ. Սիրունյան
		Ա. Քամալյան
		Լ. Ստեփանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան